



Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԶՏԵԼ ԶՈՒՐԵՐԸ



ՈՎԱՆԴԱԿ Սպանիոյ՝ այլ մանաւանդ վալենյա գաւառին
մէջ կամաց կամաց կը տարածուի քողէրս փոխադրա-
կան հիւանդութիւնը։ Արդ այս ախտիս առթիւ կարևոր
ինքիր մի ծագեցաւ ջրոյ վրայ. և յիրաւի այժմ ծարաւոյ
եղանակ է, և այս ժամանակս մանաւանդ՝ որդնալից
ջուր գործածուելով ամէն տեղ, հարկ է ընտրելագոյն մի-
ջոց մի գտնել զայն մաքրելու և մեր ազբերականց ջրերը
ըմպելի ընելու համար։

Գիտեմ բազմաց պատասխանը՝ թէ պարզուտ ունինք, և այս կը
բաւէ մեր ջուրը ժայռէ բղիսեալ ականակիտ ջրոյ հաւասարեցնե-
լու համար։ Շատ լաւ. բայց անզամ մի խոշորացուցիւ գիտէ այն պայ-
ծառ ջուրը, և միտք կը փոխես։

Շատ անտեղութիւններ ունին գեաերուն ջրոց մաքրութեան հա-
մար գործածուած պարզուտ լրջեղջիք, ասկայն մեր նպատակն է խօ-
սիլ աստէն տուներու մէջ գործածուած քամոնցներու վրայ։ Յայտ է,
թէ շատ ատենէ ՚ի վիր այս նիւթոյս վրայ խօսուած է. բայց որչափներ
կը կարծեն թէ իրենց աղբեր ծորակէն վազած աղտոտ ջուրէն վախ-
նալ պէտք չէ, վասն զի սոյն այս ջուրն կը ցտուի քարէ կամ յածխոյ
շինուած քամոցով։ Ասկայն այս քամոցաց տուած խարէական ապա-
հովութիւնը՝ մեծամեծ վասանգներէ մին է։

Յիրաւի քամոցն կը զտէ զջուրը և կը մաքրէ ՚ի մեծամեծ աղտու-
ղութեանց, բուսական և կենդանական աւելորդաց, յաւազոյ և ՚ի
տղմոյ, . . . բայց ոչ երբեք կը մաքրէ զայն կարգէ դուրս փոքրիկ և
վլաստակար ճճիներէն, եւ որ մեծն է, գործարանական աղտեղու-

թիւնք քամոցին ներսը խաւ մի կը ձևացընեն կամաց կամաց, և այս մի միայն բաւական է որդանց և ճճեաց բազմնալուն: Այնպէս որ ժամանակաւ ֆասրէօրի օդապարիկ կը դառնայ բամոցն, մշակութեան յարմար հող, յորում շատ աւելի ճճիք կը լինին քան այն ջըրոյն մէջ զոր կ'ուզենք զտել: Ուստի կը յանձնեն բազումք լաւ մաքրել սրբել քամոցը երբեմն երբեմն, սակայն ենթադրելով վերոյիշեալ կանոնաւոր կիրապով խաւ ձևանալն, արդեօք կը բաւէ քամոցը միայն մաքրել: Լաւ է, մաքրենք անոր վրայ, իսկ ներսը ինչ ընենք:

Անգղիոյ մէջ ելեկուական քամոցներ հնարուեցան, որք կազմեալ են սպանգակերպ երկաթէ, ածխոյ թիթեղներէ, և ելեկուական անօթոց հետ հաղորդակցութիւն ունին: Զուրը ելեկուական հոսանց ազդեցութեան ներքև կ'արձակէ թթուածին, որ կը չնշէ զճիս: Սակայն այս գիւտո կը ծառայէ միայն այն ճճեաց դէմ որք կը վնասուին թթուածնէն. բայց դուցէ թէ օդակեաց կոչուած ճճիք աւելի ևս բազմանան թթուածնին տճելովն:

Կան ևս տաք յախճապակեայ քամոցներ, յորս յախճապակւոյ ծակտիքը կ'արգելուն ճճեաց անցըը, բայց ոչ միայն միւս քամոցաց պէս կ'աղտեղին, այլ և սակաւաքանակ ջուր կը մատակարարեն, և զանոնք գործածելու համար մեծ ճնշումն պէտք է, զոր միշտ ձեռքեր. նիս չէ ունենալ:

Լաւագոյն է եռացեալ ջուր խմել, վասն զի եռացմամբ գրեթէ բոլորովին կը չնջուին ճճիք. սակայն հարկ է քիչ մ'ատեն եռացման մէջ պահել զիուրը, և քանին մը վայրկեան չի բաւեր, ինչպէս կը համարին ունանք: ի Պետրին, Քոխի քիմիական գործանցին մէջ եղած փորձերն կը հաստատեն, թէ գէթ քառորդ մի հարկ է եռացը. նել զիուրը, որպէս զի անոր ամէն բոլորչներն լուծուին Եւ բոլորովին ապահով լինելու համար՝ թէ ողջ ճճի մի չմնաց, պէտք է ամիողջ ժամ մի եռացընել զիուրը, եթէ ջուրը լի է բազմութեամբ ճճեաց. ապա թէ ոչ քառորդ մի կը բաւէ:

Ամենայն մարդոյ քսակին յարմար է այս միջոցս. թէպէտ և կրնայ ոք ըսել, թէ եռացեալ ջուրն կը լինի անհամ, դժուարամարս, և սակաւ օդը կը պարունակէ:

Դժուարամարս և անհամ. պարզապէս նախապաշարմունք է այդ: Սակաւ օդ կը պարունակէ. Շարժէ զայն քիչ մը, և ահա եռացմամբ հանած օդը վերստին կը դառնայ:

Սակայն ոչ ոք կը բռնադատէ զքեզ զուր ջուր ըմպելու. լաւագոյն է այս ախտիս ատեն, ձենաց պէս թեթև թէյ և կամ ջրալից տուրճ խմել, և այսու տաք ըմպելի ալ խմած կը լինիս:

Ամառ ատեն տաք բան ըմպել յիրաւի ոչ ոք կ'ախորժի. և շատերը Գուալցի կոչնականին հետ կ'աղաղակեն.

« Տէ՛ր Աստուած, բնաւ սառ չկայ ամառուան սաստիկ ջերմութեան
ատեն, Յունիս ամսոյն մէջ ։»

Ցիրաւի բնաւ սառ շըլլայ. վասն զի, Նախ ապացուցեալ է, որ մեզի
մատակարարուած սառն կազմեալ է 'ի ջրոյ, յորում կան ախտաւոր
բողբոջք, և ինչպէս եռացմամբ կը չնջուին ճէիք, այսպէս սառով կը
պահուին. ուստի բոլորովին աւելորդ է եռացընել զջուրը, եթէ անոր
մէջ սառի կտոր դնելով՝ ճճի պիտի գոյացընես։

Երկրորդ, ապացուցուած է որ աւելի առողջութեան օգտակար է
տաք քան թէ ցուրտ ըլմպել: Այերիկացի բժիշկ մի ցըցուց որ տաք
ջուրն աղեաց շարժումը կ'առաւելու, կը սրբէ ներքին մաղասային
մասերը, մաղձի հոսման կ'օգնէ, աղեաց մէջէն դուրս կը հանէ զայն
և շժողուր որ արեան հետ խառնուի։

Չուրն տաք պէսք է լինել, և ոչ թէ գաղջ: Թէյի կամ առործի բա-
րեխառնութիւնը հարկ է ունենայ, այն է 39-420, Դժուարահաղից
համար մեծամեծ օգուտներ ըրած է տաք ջուրն: Վերջապէս, երեք
հարիւր միլիոն Ճենացիք յանիշատակ ժամանակաց հետէ պաղ ջուր
ըմպելու գաղափար չեն ունեցած. պիտի ըսես թէ Ճենաց համար լսու
է, իսկ ինձի: Ստուգիւ, դու պիտի փորձես զայն. արդ զճճիս կ'ընտ-
րես, թէ

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒԹԻՒՆՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷ

Սպագրութիւնն ներկայ յառաջադիմութեանց ծնունդ տուող այս
արուեստս՝ անցեալ դարուն սկիզբները միայն մուտք գտաւ Տաճ-
կաստանի մէջ: Այն ինչ տպագրութեան գիւտն յայտնի եղաւ, նոյն
Ժամանակի (1483) Սուլդանն՝ Պայէզիտ Բ յատուկ հրովարտակ հա-
նելով՝ իւր հպատակաց արգիլեց տպագրեալ գրոց գործածութիւնը՝
մահուան պատիժ սպառնալով: Այս հրովարտակը վերստին հաստա-
տեց 1515 իւր որդին՝ Սէլիմ III, և ամենայն խստութեամբ պահուե-
ցաւ մինչև 1720 տարին:

Այս 1720 տարւոյ մէջ Ահմէտ Գ Սուլդանն դեսպան դրկեց Լու-
գովիկոս ԺԵ Գաղղիոյ թագաւորին զՄէհէմմէտ. վերջինս միասին
տարաւ. 'ի Փարիզ իւր որդին Սայիտ Եֆէնտի, որ այս առթիւ այ-
ցելութեան ելնելով Գաղղիոյ մայրաքաղաքին քանի մը տպագրա-
տանց, հրաշացաւ տեսնելով թէ տպագրութեան արուեստն ինչպիսի
բարոյական և նիւթական օգտաւէտ արգիլեց յառաջ կը բերէր, և
մտածեց իւր հայրենեաց մէջ մտցընել զայն: իւր այս դիտմանն օգ-